

ՄԻՋԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական
և քաղաքացիական դատավարության իրավունքի
ամբիոնի ասպիրանտ

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ



XVIII դարի լուսավորիչների հայեցակետում սեփականության իմմանխոնքը շաղկապնում է իրավական պետության նրանց իրեալի հետ։ Ըստ այդմ՝ իրավունքից հետո սեփականությունը քաղաքակրթության երկրորդ իրամայականն է։ Ավելին, սեփականությունը ինքնին իրավունք է, քանզի մարդու բնական պահանջմունքն է և նրա աշխատանքի՝ մարդու համար բնական օրենքի և գոյության անհրաժեշտ պայմանի արդյունքը։ Սեփականությունը որպես իրավունք նույնքան կարևոր է մարդու գոյատևման համար, որքան ազատությունը որպես իրավունք¹։ Սեփականության իրավունքը մարդու գոյության, կատարելագործման և երջանկության իմմանական պայմանն է։

Նախակապիտալիստական արևելյան հասարակարգերում և Բերրի կիսալուսնի (Fertile Crescent) աշխարհագրական տարածքում սեփականության անձեռմխելիությունը ի հայտ եկավ տաճարային սեփականության նկատմամբ։ Սեփականության այս ձևը համարվում էր աստվածային։ Դարերի հոլովույրում սեփականության ձևերի հավասարության սկզբունքի հաստատմամբ այդ անձեռմխելիությունը սկզբնապես տարածվեց միապետական, այնուհետև սեփականության այլ ձևերի նկատմամբ, որի արդյունքում սեփականության իրավունքը վերածվեց քացարձակ, անօտարելի իրավունքի և գոյատևեց որպես այդպիսին մինչև պողիտիվիստների՝ սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգի ծնունդն ու այդ հայեցակարգի առաջին ամրագրումը իրավական ակտերում։

Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգի ծնունդն ազդարարվեց փիլիստիվության ընկալման նոր դարաշրջանում՝ պողիտիվիստների սոցիալական տեսությունում։ Պողիտիվիստների սոցիալական տեսությունը բանաձևում էր ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ, պողիտիվիզմի նախահայր Օ. Կոնտի, Լ. Դյուգի, Վոլֆ, Գեղեման և այլոք կարծում էին, թե սուրյեկտունների մոտ քացակայում են իրավունքները, և նրանք պարտավոր են ենթարկվել սոցիալական նորմերին, կատարել իրենց վրա դրված սոցիալական գործառույթները³։ Սոցիալական տեսության սոցիոլոգիական բովանդակությունը հասարակության մեջ իրավունքի որպես հավասարակշռող ուժ հանդես գալու մեջ է։ Հետևելով պողիտիվիզմի նախահայր Օ. Կոնտին՝ Դյուգին փորձում էր վերացնել իրավաբանական գիտության մեջ որոշ մետաֆիզիկական հասկացություններ, ինչպիսին էր «անձի սուրյեկտիվ իրավունք» հասկացությունը։ Թեև Դյուգին ամբողջապես չիրաժարվեց «սուրյեկ-

կողմից ստեղծված «պողիտիվ կորոնի» նշանաբանը, այն է՝ «Ապրում եմ ուրիշի համար» կամ «Ոքեն սիրում եմ ավելին, քան ինձ և ինձ սիրում եմ հանուն քեզ»²։ Իրենց կողմից իրականացվող սոցիալական գործառույթների տեսակետից իրավական հարաբերությունները ներկայանում են որպես սոցիալական խաղաղ աշխարհի մի բնագավառ, որը հավասարակշռված են մարդկանց, սոցիալական խմբերի ու դասակարգերի թշնամական և հակադիր շահերը։ Իսկական խաղաղությունը միշտ հանդիսանում է իրավունքի վրա իմմանված խաղաղություն։ Իրավունքը հավասարակշռում է անձի և հասարակության միջև եղած հակադրությունը։ Ամեն իրավական համակարգ բաշխում է բոլոր իրավունքները անձի և հասարակության միջև և ստեղծում է մի կողմից անհատի՝ սուրյեկտիվ իրավունք, մյուս կողմից՝ հասարակության՝ օրյեկտիվ իրավունք։ Պողիտիվիստական սոցիալական փիլիսոփայության տեսանկյունից սեփականության իրավունքը ևս վերահմաստավորվեց։ Պողիտիվիստական գիտական դպրոցը հիմված էր իրավունքի սոցիալական գործառույթի առանձնացման վրա, որով պայմանավորվեց սեփականության իրավունքի բացարձակ բնույթի անցումը սահմանափակին։ Այս տեսության հետինակները (Օ. Կոնտ, Լ. Դյուգի, Վոլֆ, Գեղեման և այլոք) կարծում էին, թե սուրյեկտունների մոտ քացակայում են իրավունքները, և նրանք պարտավոր են ենթարկվել սոցիալական նորմերին, կատարել իրենց վրա դրված սոցիալական գործառույթները³։ Սոցիալական տեսության սոցիոլոգիական բովանդակությունը հասարակության մեջ իրավունքի որպես հավասարակշռող ուժ հանդես գալու մեջ է։ Հետևելով պողիտիվիզմի նախահայր Օ. Կոնտին՝ Դյուգին փորձում էր վերացնել իրավաբանական գիտության մեջ որոշ մետաֆիզիկական հասկացություններ, ինչպիսին էր «անձի սուրյեկտիվ իրավունք» հասկացությունը։ Թեև Դյուգին ամբողջապես չիրաժարվեց «սուրյեկ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տիվ իրավունք» և «օբյեկտիվ իրավունք» հասկացություններից, սակայն, այնուամենայնիվ, գոտում էր, որ այժմ մետաֆիզիկական հայեցակետերն արդեն անտեղի են, այն դուրս է գալիս գործածությունից և պետք է զիջի իր տեղը օբյեկտիվ իրավունքի հասկացությանը, այսինքն՝ «պարտադրում է նրան որոշակի առարկություն կատարել» և միաժամանակ «իրավունքն է տախս կատարել այս առաքելությանը պատեհ ակտեր»⁴:

Այսպես, Դյուգին, ներկայանալով որպես իրավունքի հասկացման սոցիալական-իրավաբանական պաշտպան, իրավունքը համարում էր «սոցիալական գործոնների անմիջական արդյունք»: 20-րդ դարի սկզբում նա ամեն ջանք գործադրեց Ֆրանսիայի քաղաքացիական իրավունքի սոցիալականացնելու համար: Հենց Դյուգին սեփականության սոցիալական տեսության առաջին տեսիլքները գոտվ Օգյուս Կոնստի աշխատություններում: Մասնավորապես ուշադրություն էր դարձվում Կոնստի այն հայտարարությանը, որի համաձայն՝ «սեփականությունը, որը պողիտիվիզմը տեսնում է մեկ անհրաժեշտ սկզբունք՝ ուղղված ձևավորելու և կառավարելու կապիտալիտերը, որտեղ յուրաքանչյուր սերունդ պատրաստում է հաջորդի աշխատանքները»: Դյուգին գրեց. «Սեփականությունն իրավունքը, սեփականությունը սոցիալական գործառույթը»⁵:

Իրավունքի սոցիալական գործառույթի առանձնացման վրա էր հիմնված նաև մեկ այլ դպրոցի կողմնորոշում: Մարքս-լենինյան քաղաքարախոսության դարաշրջանում, երբ սեփականության իրավունքի անհատական գործառույթը հերքվեց ու մերժվեց, սեփականությունը սկսեց կրել բացառապես հանրային բնույթ՝ դրսորվելով երկու՝ պետական և կոռուպտատիվ ձևերով: Վերջինս (կոռուպտատիվ սեփականությունը) շուկայական տնտեսությունում կերպարանավորվում էր որպես մասնավոր սեփականության ձև: Սոցիալիստական իրավական համակարգը, չվարողանալով հաղթահարել գլխավորապես սուբյեկտիվ իրավունքի և առանձնապես սուբյեկտիվ սեփականության իրավունքի անհատական գործառույթըների խնդիրները, մասնավոր սեփականության հիմնական երեք ձևերից կոլեկտիվն ու ընդհանուրը վերառություն հիմքում հանրային սեփականության դրսորումներ, իսկ անհատական ձևի դեմ ուղղանքարական պայքարում գործի դրվեց վեհ բարոյախրատական զաղափարների քարոզումը: Այդ զաղափարախոսությունը բովանդակում էր. մասնավոր սեփականու-

թյունը հասարակությունը բաժանում է թշնամական դասակարգերի, որոնց միջև գործում է տիրապետման և ենթարկման սկզբունքը⁷: Սեփականության իրավունքի սոցիալիստական նման զիտափիլսության հայեցակարգի սնանկությունը և այդ հայեցակարգի կիրարկման վախճանը ամենից առաջ նրանում էր, որ այն անտեսեց մարդկային հասարակության կյանքի սոցիալ-տնտեսական ու քաղաքական ասպարեզների իրական բնույթը և առհասարակ առհամարեց նրա հոգևոր ոլորտը: Յուրաքանչյուրի հոգեքանության հիմքում հենայան նման վեր է խոյանում սեփականության կամ սեփականատիրական զգացումը, տեսչանքն ու քաղցր դեպի մասնավոր՝ անհատական սեփականությունը⁸: Իրականում ոչ թե մասնավոր սեփականության վերացումն ու սոցիալիստական հանրային սեփականության հիման վրա հասարակության կազմակերպումը կիանցեցնի հակամարտությունների վերացմանը (ինչպես քարոզվում էր սոցիալական կարգերի ժամանակ), այլ հանրային սեփականության արդար, իրավական իմաստով հավասար մասնավորեցումը, ապապետականացումը կամ ապահանրայնացումը: Ինչպես իրավացիորեն նկատել է Գարեգին Նժեներ՝ ընդհանուր բարիքը դառնում է չարիք, երբ չի արտացոլում մասնավոր բարիքը⁹:

Պողիտիվիստների սոցիալական սեփականության տեսությունը հակադրվեց 19-րդ դարի ոռմանիստների սեփականության սուբյեկտիվ իրավունքի հայեցակարգին: Եվ եթե սկզբնական շրջանում սեփականության սոցիալական գործառույթի տեսությունը թշնամորեն հակադրեց իրեն սեփականության սուբյեկտիվ իրավունքի ոռմանիստների տեսությանը, ապա արդի իրավագիտությունում սեփականության իրավունքը ներկայանում է այդ երկու տեսությունների միաձուլվածքի համատեքսում, ըստ որի՝ սեփականության իրավունքը՝ որպես սուբյեկտիվ իրավունք, ունի ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական գործառույթները¹⁰: Այլ կերպ ասած՝ սեփականությունը սուբյեկտիվ իրավունք է՝ ծանրաբեռնված կամ սահմանազարդ սոցիալական գործառույթներով՝ որպես սեփականության սուբյեկտիվ իրավունքի սոցիալական գործառույթներ:

Սոցիալական գործառույթի հիմքերը կարելի են գտնել հողմեական ինստիտուցիաներում, ուր նշվում է թե expedit reipublicae ne sua re quis male utatur, ասել է թե՝ ի շահ պետության այն, որպեսզի ոչ մեկ չչարաշահի իր սեփականությունը¹¹: Սա-

կայն Եվրոպայում Վեյմարյան սահմանադրությունը առաջինն էր, որ նախատեսեց սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի վերաբերյալ դրույթ սոցիալապես պայմանավորելով մասնավոր սեփականությունը¹²: Եվրոպայում սեփականության սոցիալական գործառույթի հայեցակարգը պատմականորեն պայմանավորված էր: Նման պայմանավորվածություն ուներ և այդ տեսության հետագա օրենսդրական մարմնացումը: Հետագայում այսօրինակ նորմեր ներառվեցին աշխարհի բազմարիվ երկրների (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, ԳՖՀ, Նիդերլանդներ, Բրազիլիա, Իտալիա, Իսպանիա, Հունգարիա և այլն) սահմանադրություններում, որոնք ևս բովանդակում են սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգը ամրագրող իրավական նորմեր: Վեյմերյան սահմանադրությունից ևք սեփականության սոցիալական գործառույթի սահմանադրական դրույթը իրացվեց Գերմանիայի իրավական համակարգի տարբեր իրավունքի ճյուղերում, հատկապես՝ հողային իրավունքում: Հունգարիայի նոր սահմանադրությունը, որն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ին, ընդգծում է՝ գրյուղի սեփականատերը կրում է սոցիալական պարտականություն¹³: Իսկ Իսպանիայի Սահմանադրությունը /մ. 2, հոդ. 33/ սահմանում է, թե, համաձայն օրենքի սեփականության, իրավունքի սոցիալական գործառույթը սահմանափակում է նրա բովանդակությունը: Հունաստանի սահմանադրությունը ընդգծում է, որ «սեփականության իրավունքը չի կարող իրականացվել ի վեհա հասարակական շահին»¹⁴, իսկ Թուրքիայի սահմանադրությունը նշում, որ այդ իրավունքի իրականացումը չպետք է հակասի հասարակական շահին¹⁵: Ֆրանսիայում այս հայեցակարգը ևս օրենսդրական լայնածավալ ամրագրում ստացավ: Ավելին, 1948 թվականին սեփականության սոցիալական գործառույթի տեսությունը ճանաչվեց որպես ֆրանսիական չորրորդ հանրապետության կվագի պաշտոնական դրվագինան¹⁶: Սոցիալական գործառույթի դրսևորումները առկա են նաև անզրսաքսոնական իրավական ընտանիքի անդամ երկրների համակարգերում: Այսպես, դելիկտային իրավունքում «duty of care» հասկացությունն անհատին, այդ թվում՝ սեփականատիրոջը, վերապահում է հասարակության այլ անդամների և հասարակության հանդեպ իրավական պարտականությունները:

Սեփականության հասարակական էությունը տեսանելի է դառնում հենց սոցիալական, քաղա-

քական և հոգևոր ոլորտներում: Սեփականության իրավունքը սերտորեն կապված է պետությունների սոցիալական և տնտեսական քաղաքականությանը: Սահմանադրափական ինստիտուտների սոցիալական բնույթն ածանցյալ է սահմանադրության սոցիալական գործառույթից և պետության սոցիալական պետություն սկզբունքից: Ըստ սեփականության սոցիոլոգիական գործառույթի փիլսոփայության՝ սոցիալական ուղղվածություն ունեցող պարտավորությունները միավորում է նրանց միավորող և ընդհանրացնող մեկ կոնկրետ բնույթը: Սոցիալական պարտավորությունը յուրաքանչյուրի կարողությունը հասարակությանը փոխանցելու մեջ է: Դա սոցիալական և քաղաքական պարտավորության արմատն է¹⁷ (Սպինոզա): Սեփականությունն էլ իր հերթին պահանջում է համագործակցություն և փոխադարձ օգնություն:

Գործառույթ-ֆունկցիան հասկանում են որպես պարտականություն: Գործառույթի նման պատկերացումներ սահմանվում է մի շարք սահմանադրություններում: Բայց եթե գործառույթը ու պարտականություն հասկացությունները նույնացվում են, ապա իմաստագրկվում է դրանց տարանջատման անհրաժեշտությունը: Գործառույթը յուրահատուկ, բարդ և վեկտորավորված պարտականություն է: Այն, որ գործառույթը ըստ նպատակի վեկտորավորված պարտականություն է, վկայում նաև 1940 թվականին գերմանական օրենսդրության մեջ գերմաներեն function (գործառույթ) օւսարածին տերմինի «գոտարյուն» գերմանական ասցածեք բառով փոխարինման փորձը, որը բառացի նշանակում է առաջադրանք¹⁸: Այսպես, Խորվաթիայի Սահմանադրության 48-րդ հոդվածը մատնանշում է, որ սեփականությունը հարուցում է պարտականությունները¹⁹: Հետևաբար, նման պարտականությունները սոցիալական գործառույթների հետևանք են, իսկ սոցիալական գործառույթը՝ պարտականությունների հիմք և պատճառ:

Սոցիալական տերմինի հայերեն թարգմանությունը ևս դժվարություններ է ներկայացնում: Այն չի փոխարինում ո՛չ հանրային, ո՛չ հասարակական և ո՛չ պետական հասկացությունները, այլ ամբողջանում է այս բոլորը հասկացությունները միավորելու դեպքում: «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ հանրային շահը հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման սահմանադրական հիմքն է: Ըստ այդմ,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գործող օրենսդրությամբ հանրային հասկացությունն ավելի լայն է և իր մեջ է ներառում հասարակական և պետական հասկացությունները: Սակայն սոցիալական գործառույթի տիրույթը ավելի լայն է: Այսպես, օրինակ, սոցիալական գործառույթը պարտավորեցնում է բնակարանի սեփականատիրոջը իրացնել իր իրավունքը՝ կատարելով բազմաբնակարան շենքի պահպանման ուղղված գործողություններ և ձեռնպահ մնալ այն գործողություններից, որոնք կարող են վճարել ընդհանուր բաժնային սեփականությունը:

Պետությունը, լինելով սոցիալական երևոյթ, ունի նաև այլ գործառույթներ, ինչպիսիք են՝ տնտեսական, քաղաքական, բնապահպանական և այլն: Սակայն, «սեփականության սոցիալական գործառույթը» հասկացությունում սոցիալականը դիտվում է որպես զգալիորեն լայն հասկացություն՝ իր մեջ ներառելով մնացած բոլոր հասկացությունները: «Սեփականության սոցիալական գործառույթը» հասկացության մեջ սոցիալականը նշանակում է ինչ-որ կոնկրետ /պետական, համայնքային, կամ այլ մասշտաբի/ հասարակության շահը կամ իրավունքները հարգող պարտականություններ:

Իրավունքի տեսության մեջ ընդունված է պարտավորությունները դասակարգել պողիտիվի և նեգատիվի: Սակայն, պարտավորությունների նման դասակարգումը կարծես թե թերի է: Սոցիալական գործառույթին վերաբերող բազմաբնական երկրներում առկա համապատասխան դրույթերի վերլուծությունը բույլ է տալիս սոցիալական պարտավորությունների փնջի մեջ ներառվող պարտավորությունները ենթարկել նաև այլ գիտական պայմանական դասակարգումների: Պարտավորական իրավունքի տեսությանը հայտնի է ժամանակի ընթացքում և տարածության մեջ պարտավորությունների անցումայնության կամ փոխակերպման հատկությունը: Սոցիալական գործառույթի հենց այս ընկալումով է պայմանավորված պարտավորությունների այլ դասակարգման անհրաժեշտությունը: Պարտավորության մեկ վիճակից անցումը մեկ այլ վիճակի կախված է ապագայում հնարավոր, տեղի ունենալիք, որոշակի փաստից կամ փաստերից: Սեփականության անձեռմխելության դեպքում սոցիալական գործառույթի ստվերի ներքո համախմբված պարտավորությունները կրում են նեգատիվ պարտականությունների հատկություն, իսկ, ասենք, հանրային շահի գերակայության դեպքում նույն այդ պարտականությունները սերտա-

ճում են պողիտիվ պարտականությունների: Այլ կերպ ասած, սոցիալական գործառույթը ներկայանում է որպես պարտականությունների փաթեթ: Ուստի, պարտավորությունների նման բնույթը կարելի է բանաձել հետևյալ կերպ. այն պարտավորությունը, որի իրականացումը կախվածության մեջ է դրված ապագայից և անհայտ ժամանակում վրա հասնող որոշակի իրադարձությունից, պետք է անվանել պայմանական պարտավորություն՝ ներառելով պարտավորության առանձին դասակարգման մեջ: Պարտավորության հենց այս մոդելը առաջարկում ենք իմք ընդունել հայրենական օրենսդրությունում սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի քաղաքացիակարգական կարգավորման հիմքում:

Հանրային սեփականության գործառույթըներից էլ ածանցյալ է հանրային սեփականության իրավունքի սուրյեկտների գործառույթները հանրային սեփականության կառավարման ոլորտում և այս գործառույթների ծավալը, բնույթն ու իրականացման կարգը:

Պետական սեփականության իրավունքի սուրյեկտը, այսինքն՝ պետական գույքի սեփականատերը, ժողովուրդն է՝ տվյալ պետության ինքնիշխանության (սուվերենության) սուրյեկտը: Պետական սեփականությունը՝ որպես հանրային սեփականություն, անհատական գործառույթներ չի իրականացնում, իսկ ավելի ճիշտ՝ պետական սեփականության պարագայում անհատական և սոցիալական գործառնութական հարթությունները համընկնում են: Համայնքային սեփականության պարագայում անհատական գործառույթի բովանակությունը այլ է. համայնքային սեփականության իրավունքի անհատական գործառույթը իր բնույթով ևս սոցիալական է, սակայն այլ հզորության ու հարթության: Համայնքային սեփականության իրավունքի անհատական գործառույթի անհատականացումը պայմանավորված է պետական՝ հանրային սեփականության սոցիալական գործառույթի առկայությամբ և դրա համեմատ: Այսինքն՝ պետության մեջ համայնքը՝ որպես մեկ սուրյեկտային միավոր, սեփականության իրավունք՝ օգտագործման և տնօրինման լիազորությունների իրացումն պարտավոր է իրականացնել սոցիալական գործառույթների կանոններին ներդաշնակ: Եվ այս տեսանկյունից համայքի՝ որպես պետությունից առանձնացված միավորի սեփականությունը ունի իր ինչպես անհատական, այնպես էլ սոցիալական գործառույթներ: Իսկ մասնավոր սեփականության

տեսանկյունից համայնքի անհատական գործառույթը մասնավոր սեփականության նկատմամբ կրում է սոցիալական բնույթը: Հետևաբար, հանրային իշխանության սուբյեկտների պարտականությունն է հանրային սեփականության իրավունքի օրենսդրության կառավարման դեպքում հավատարիմ մնալ հանրային սեփականություն համարվող գույքի առաջին և հիմնական գործառույթի բնությանը: Սոցիալական գործառույթի էությունը բաղկացն է հենց հանրային սեփականության իրավունքի իրմանությունը և բնորոշում է նրա գործառնական էությունը:

Սակայն պետական սեփականությունը՝ որպես հանրային սեփականություն, կարող է իրականացնել անհատական գործառույթներ, եթե այն դիտարկել միջազգային իրավահարաբերությունների սուբյեկտ: Միջազգային իրավունքի դիտանկյունից պետական սեփականության անհատական գործառույթների տեսքը, որոնք իր բնույթով ընկալվում են որպես սոցիալական: Պետական սեփականության իրավունքի անհատական գործառույթի անհատականացումը պայմանավորված է միջազգային հասարակության ընդհանուր գույքի առկայությամբ: Ուստի, յուրաքանչյուր պետության պարտականությունն է հանրային սեփականության իրավունքի օրենսդրությունը կառավարման գործընթացում միջազգային հասարակության համար արժեք, նրա ժառանգույթուն ներկայացնող գույքը: Ծիչու է նման գործառույթարտականությունների չպահպանման համար միջազգային հանրությունը համապատասխան սուբյեկտներին պատասխանատվության ենթակելու համար արդյունավետ իրավական լծակներ չունի (օրինակ, Աֆղանստանում ծայրահեղ իսլամիստականների կողմից Բուրքայի հայտնի արձանների ոչնչացման կանխման հարցում միջազգային հանրությունն զտնվեց անզոր):

Պետության գույքի անհատական գործառույթը առերևույթվում է միջազգային հասարակության ընդհանուր սեփականության գույքի նկատմամբ, որպիսին են՝ Անտարկտիկան, Արկտիկան և այլն: Այսօր ամերիկյան և Եվրոպական իրավական ու տնտեսագիտական դոկտրինաներում առաջարկվում է նման իրավական կարգավիճակ տալ բնական օգտակար այն հանածոներին, որոնք ունեն միջազգային հանրության կեսնազործունեության համար ծայրահեղ անհրաժեշտ բնույթը: Այդպիսիք են համարվում նավթը, գազը և այլն: Բացի

այդ, պետությունները ծանրաբեռնված են միջազգային հասարակության, հարևան պետությունների բնակչության, գոյություն ունեցող կամ պատմությունն զիրկն անցած ազգերի բողած մշակութային արժեքների և ժառանգության պահպանման միջազգային սոցիալական գործառույթներով: 1990-ականներից սկսած տարբեր հեղինակներ և հաստատություններ, այդ բայց՝ ՍԱԿ-ը, առաջ բերեցին «համաշխարհային հանրային գույք» եզրույթը, որի պահպանման և շահագործման հոգու դրվագ էր համաշխարհային հասարակության՝ որպես մեկ միասնական միավորի ուսերին: Ավելին, այս հասկացության առաջ գալու պատճառներից մեկն էլ միջազգային հանրությանը մեկնված մարտահրավերներն են (ինչպես օրինակ, կլիմայական փոփոխությունը, համաշխարհային ֆինանսական և մշակութային ճգնաժամը), որոնք ժամանակակից հանրության առջև են որպես «մարդկության ընդհանուր հոգսերը»²⁰: Ի տարբերություն ՍԱԿ-ի կոմից պաշտպանվող հայեցակետի՝ տնտեսագիտական մոտեցումը չի պարտադրում համապատասխան գույքի «համաշխարհայինացում» և հնարավոր է համարում գույքի պետությունը կամ մասնավոր անձին ի սեփականություն պատկանալը, միայն թե սեփականությունը պետք է ծանրաբեռնված լինի համաշխարհային հանրության նկատմամբ պարտականություններով:

Պետական կամ համայնքային սեփականությունը ձևավորվում է և գործում է պետական կամ համայնքային՝ հանրային խնդիրների լուծման և պահանջների բավարարման համար: Սակայն հանրային պահանջները ևս ունեն որոշակի մակարդակներ: Նման դեպքում պետական հասարակության շահը համայնքային հասարակության շահի նկատմամբ գերակա է: Նման մոտեցումն իր ամրագումը ստացել է և ՀՀ օրենսդրությունում: Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ պետության կարիքների համար համայնքին իր սեփականություն համարվող գույքից գրկելը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխառուցմամբ: Այսպես, սույն օրենքը սահմանում է հանրային դիտարկվող համայնքային սեփականության օտարելիությունը նույն մասնավոր սեփականության օտարելիության հիմքով, պայմաններում ու կարգով՝ չսահմանելով համայնքային գույքի այն շրջանակը, որը օտարվել չի կարող: Համայնքային սեփականության օտարման հիմքը և կարգը,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օտարման սեփականության դիմաց փոխհատուցման տրման կարգը սահմանվում է «Հասարակության և պետության կարիքների սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով²¹: Նման իդում կատարում է նշված օրենքի 2-րդ հոդվածը՝ նշելով, որ սույն օրենքի գործողությունը տարածվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև համայնքներին սեփականության իրավունքը և Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Հայաստանի Հանրապետություն օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած բոլոր օբյեկտների վրա: Հետևաբար, մասնավոր գույքի գործառույթները հանրային սեփականության իրավունքի գիտությանը հետաքրքրական են հետևյալ պատճառներով.

- հանրային՝ պետական և համայնքային սեփականության ձեռք բերման միջոցների մասնավոր և համայնքային գույքի սոցիալական գործառույթի գաղափարն է,

- ՀՀ օրենսդրությանը հայտնի հանրային սեփականության պետական և համայնքային ձերի «ստորադասություն» համայնքային սեփականությանը պետական սեփականությանը օժտում է մասնավոր սեփականության գործառույթներով,

- պետական սեփականության գործառույթներն ակներևում են մասնավոր սեփականության գործառույթներում, քանզի նախ՝ պետությունը կարող է լինել նաև մասնավոր սեփականության սուբյեկտ, և երկրորդ՝ պետությունը կարող է մասնավոր և համայնքային սեփականության դադարման նույն հիմքով դադարացնել պետական գույքի նկատմամբ կնքված քաղաքացիարակական գործարքների գործողությունը (օրինակ, պետական գույքը վարձակալության հանձնելու մասին պայմանագիրը) կամ փոխել պետական գույքի օգտագործման նպատակային նշանակությունը (օրինակ, պետական մարմինների /իսկ համայնքի կողմից նաև տեղական ինքնակառավարման մարմինների/ գործունեության համար նախատեսված գույքը, որը պետական սեփականություն է, ուղղել ի կատարումն գերակա հանրային շահի):

Մեզ հայտնի սեփականության սոցիալական գործառույթը սահմանող սահմանադրական նորմերի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ սոցիալական գործառույթի սահմանադրական նորմերը լինում են երկու տիպի՝ առաջին մոդելը սահմանում է այդ իրավունքի սոցիալական պարտավորություններով ծանրաբեռնված լինելու մասին, մյուս մոդել՝ դրա բովանդակության սոցիա-

լական գործառույթի սահմանափակվածության մասին: Այդ մոդելների ներքո սոցիալական գործառույթը կարելի է հասկանալ երեք իմաստով.

- գույքը կարող է օգտագործվել կամ հանրային շահի շրջանակներում՝ արդար փոխհատուցման դիմաց, այլ կերպ ասած՝ սեփականությունն անձեռնմխելի է, քանի դեռ սոցիալական շահերի նժարը չի սկսել ծանրանալ, երբ հանրային շահը չի սկսել գերակայել,

- գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումն իրականացվում է առանց հանրային շահին վճասելու: Այս ձևակերպման մեջ առավելագույնս է առարկայանում սեփականության անձեռնմխելիությունը,

- գույքը օգտագործվում է հանրային շահի մշտական հաշվառմամբ: Նման ձևակերպումն հատուկ է հատկապես մշակութային և պատմական արժեք ներկայացնող օբյեկտների նկատմամբ:

Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթ-պարտավորությունների սոցիալականության բանաձևի հիմքում հանգչում է իրավունքի այն արսիտման, ըստ որի՝ իրավունքը հանդես է գալիս որպես փոխազդման միջոց. մարդու յուրաքանչյուր իրավունքի իրազրությունը հանդիպում է միայն այն սահմաններին, որոնք ապահովում են հանրության այլ անդամների, այդ բվում՝ պետության, նույն այդ իրավունքներից օգտվելուն (իմ իրավունքը սկսվում է այնտեղ, որտեղ վերջանում է քոնը): Այս արսիտման ունի պատմական և կրոնական խորը արմատներ. բազմաթիվ հասարակությունների բարոյարներակալման մեջ ընդհանուր է և կազմում է հեթանոսական ակունք ունեցող ավետարանական հետևյալ կարգախոսը. «Ինչ չես ցանկանում քեզ, մի՛ արա և ուրիշներին» (Կոնֆուցիոս, Արխստուել, Էպիքքեն և այլ): Հետևաբար՝ սոցիալական գործառույթի նման ըմբռնման դեպքում սոցիալական գործառույթի կողմից սահմանափակված սեփականատիրոջ սեփականատիրական ազատությունը սահմանազատվում է այլոց նույնարձույթ իրավունքներով կամ ազատությամբ: Սեփականատերը սեփականատիրոջ իր լիազորություններն իրականացնում է՝ նշտապես ի նկատի ունենալով հանրային կամ սոցիալական պահանջները:

Մյուս կողմից սեփականության սոցիալական գործառույթը չպետք է միայն դիտել էքսպրոպրիացիայի դրսուրման ձևով, ինչպես օրինակ Ծապոնիայում, ուր, ըստ սոցիալական գործառույթի գաղափարի, հասկացվում է միայն գույքն ըստ պահանջի հասարակությանը զիշելը՝ արգելելով դրա-

նից ավել ծանրաբեռնվածություն սեփականության իրավունքի սուբյեկտին վերապահելը: Սոցիալական գործառույթի նման ընկալումը թերի է և չի ամբողջացնում սեփականության իրավունքի արդի բնուրագիրը, չի երաշխավորում պատմական, ազգային և մշակութային արժեք ներկայացնող օրյեկտների պաշտպանությունը դրանց մասնավորեցման դեպքում:

Սեփականության իրավունքի սոցիալական գործառույթի հայեցակարգը լիազորում է օրենսդրին, սեփականատերերին ծանրաբեռնել սովորականից ավելի պարտավորություններով (օրինակ՝ հողը՝) ըստ օրյեկտների հանրության համար նշանակություն ներկայացնելու աստիճանի, ասել է թե՝ պարտավորեցնել սեփականատիրոջը օգտագործել գույքը, օգտագործել ըստ նպատակային նշանակության, չոչնչացնել գույքը և այլն: Սոցիալական գործառույթի ծավալը ուղիղ համեմատական է օրյեկտի հանրային նշանակությանը: Պարտավորություններ ծավալի մեծացումը հաջորդաբար հանգեցնում է հնարավոր պատասխանատվության դաշտի մեծացմանը:

Սեփականության երաշխիքների գործողության ոլորտը որոշվում է սեփականության բովանդակությամբ և սահմաններով: Գույքի կազմի վերաբերյալ երաշխիքները, կարգավորման առնչվող հանձնարարությունը և սոցիալական պարտավորությունները անքակտելիորեն կապված են: Սա հաստատում է նաև Եվրոպական Միության հիմնական իրավունքների խարտիայի 17-րդ հոդվածը: Սակայն, թվարկված գործոններից և ոչ մեկը չի կարող փոխարինվել կամ փոքրացվել հարկերի կամ այլ պարտադիր վճարների զանձնամբ: Այդ բոլորը պետք է հարաբերականորեն հավասարակշռված լինեն²³:

Դատելով գերմանացի իրավագետ Ռոլֆ Շտոբերի (Rolf Stober)²⁴ «Տնտեսավարչական իրավունք» աշխատությունից՝ գերմանական իրավաբանական գրականությունում սեփականության իրավունքի պարտավորությունները դասակարգվում են դասականի և ոչ դասականի:

Ըստ դասական գործառույթների՝ սեփականության գործածությունը պետք է բխի նրա բնույթից: Ցանկացած գույք օգտագործվում է առավել արդյունավետ, եթե օգտագործվում է այն նպատակի համար, ինչի համար այն կոչված է: Գույքը ձեռք է բերում որևէ լրացուցիչ գործածություն, եթե դադարում է նրա հիմնական գործառույթը: Անշարժ գույքի լավագույն և առավել արդյունավետ օգտա-

գործման սկզբունքը թելադրում է օգտագործել անշարժ գույքն առավել արդյունավետ, որը ֆիզիկապես հնարավոր է, իրավարանորեն թույլատրելի, ֆինանսապես իրագործելի և ապահովում է անշարժ գույքի առավելագույն արժեքը: Գերմանական իրավագիտության մեջ այն կոչվում է դասական գործառույթ: Այսպես, իհն սեղանը վերածվում է այլ բնույքի կահույքի, ասենք՝ պահարանի: Եվ միայն սոցիալական գործառույթի առկայությունը կարող է հանդես գալ դրա համար խոչընդուռ: Օրինակ՝ Հովհաննես Թումանյանի գրասեղանը, հանդիսանալով ազգային հանրային սեփականություն, մասնավորեցնելու դեպքում ծանրաբեռնում է մասնավոր սեփականատիրոջը պարտականություններով, ասենք՝ պահպանել և չոչնչացնել գույքը, օգտագործել այլ նշանակությամբ, և այլն:

Գերմանական իրավագիտական գրականության մեջ բացի սեփականության սոցիալական պարտավորությունների դասական շաղկապվածությունից սեփականության օգտագործումը բնորոշվում է նաև բազմաթիվ այլ պահանջներով՝ ուղղված ընդհանուր բարիքի նվաճմանը: Հետևաբար, անհրաժեշտ է նշել բնապահպանությանը, ժողովրդավարությանը, մշակույթին և տեղեկատվությանը շաղկապված պարտավորությունները: Այս գործառույթները կոչվում են ոչ դասական: Մասնավոր սեփականության հավասարակշռվածության հասանելի է պարտավորությունների միջոցով, որի հետևանքով վերածվում է մասնավոր իրավունքի և առհասարակ գույքային իրավունքի կենտրոնական հարցերից մեկը: Այսպես, ժողովրդավարության սկզբունքին շաղկապված պարտավորությունները մարմանավորվում են վարձու աշխատողների ձեռնարկության կառավարմանը մասնակցությանն առնչվող կանոններում²⁵: Սոցիալական գործառույթը անձնակազմին ընձեռում է նման իրավունքներով, ընդ որում, եթե վերջիններս ո՞չ համասնականատերեր են, ո՞չ կազմակերպության անդամներ:

Սեփականատիրոջ լիազորությունների բովանդակությունը կախված քաղաքացիական իրավունքի սուբյեկտից, օրյեկտից, ձևից և այլ հանգանանքներից կարող է փոփոխվել²⁶: Հետևաբար, սեփականության իրավունքի օրյեկտից է նաև կախված սեփականության իրավունքի լիազորությունների ծավալը և այդ իրավունքի պաշտպանության սահմանները որոշելու օրենսդրի լիազորությունների շրջանակը: Օրենսդրի լիազորությունների շրջանակը ընդլայնվում է, եթե սեփականության իրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վունքի օրյեկտը իրականացնում է սոցիալական, մշակութային և այլ հանրային-հասարակական նշանակության գործառույթները: Եվ հակառակ՝ օրենսդրի լիազորությունների ծավալը փորբանում է, եթե խոսքը վերաբերում է անհատի անձնական ազատության տարր հանդիսացող (մասնավոր) սեփականությանը: Այսպես, Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը կարգավորման հարցում օրենսդրին հանձնարարելը համարում է իր՝ որպես սոցիալական մոդելի իրականացմանն առնչվող խնդիրը, որի նորմատիվ տարրերը բխում են մասնավոր սեփականության ճանաչումից և սոցիալական պատվերից:

Սակայն, այսուամենայնիվ, այն չպետք է չարաշահել սեփականության հարկադիր օտարման ձևով, ինչ անում էին ֆաշիստական Իտալիայի և նացիստական Գերմանիայի իշխանությունները²⁷: Նման չարաշահումները կանխելու նկատա-

ռումով սոցիալական գործառույթը, որը, ինչպես արդեն նշվեց, պարտականության յուրահատուկ տեսակ է, պետք է սահմանվի և մանրամասն կարգավորվի օրենքով՝ իրացմելով իրավական պետությունում գործող պարտավորությունների բացառապես օրենքով սահմանելու սկզբունքը²⁸: Ընդ որում, իրավական որոշակիությունը ենթադրում-քելադրում է պարտականությունների հստակ սահմանում: Պարտականություն և պատասխանատվություն սահմանող օրենքը պետք է լինի կանխատեսելի, հասանելի, և մատչելի:

Ուստի, ի մի բերելով վերգրյալը՝ առաջարկում ենք սեփականության, այդ թվում՝ հանրային սեփականության՝ որպես սուբյեկտիվ իրավունքի, սոցիալական գործառույթին տալ քաղաքացիաբարձրական կարգավորում՝ սույն հոդվածում բարձրացած հարցերի և նկատառումների հաշվառմամբ:

¹ Տե՛ս Միրումյան Ռ.Ա. Պատմափիլիստփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփանության մեջ. Մերուժանական վերլուծություն, Եր., 2003, էջեր 210-218:

² Տե՛ս Զաքարյան Ս. Փիլիսոփայության պատմություն, Եր., 2007, էջ 289:

³ Տե՛ս Կուլացին Մ.Ի. Պредпринимательство и право: опыт Запада. – М.: Дело, 1992. С. 109.

⁴ Տե՛ս Միհրարյան Ռ. Սոցիոլոգիական իրավագիտության ֆրանսիական դպրոցի առանձնահատկությունները: Նման չարաշահումները կանխելու նկատա-

⁵ Տե՛ս Carbonnier J. Droit civil. Tome 3, Les biens. Paris. 1992, p. 148.

⁶ Տե՛ս Այկյան Ա. Մ. Актуальные проблемы совершенствования частного права в Армении. Дисс. на соискание ученой степени др. юр. н., М., 2006. С. 255.

⁷ Տե՛ս Սպիրկին Ա. Գ. Մարքսիստական փիլիսոփայության դասընթաց, Եր., 1970, էջ 478:

⁸ Տե՛ս Ժայդ собственности так же естественна, как и голод (Сперанский П.А) // Белокрылова О.С. Теория переходной экономики. Учебное пособие. Ростов-на-Дону, 2002. С. 42.

⁹ Տե՛ս Նժդեհ Գ. Սեծ զաղափար: /Նորահայտ մասունքներ/. - Եր.: Ամարաս, 2003, էջ 134:

¹⁰ Տե՛ս Մалиновский А.А. Назначение субъективного права (Лекции) // Правоведение, 2006, N 6. С. 228.

¹¹ Տե՛ս Carbonnier J. Droit civil. Tome 3, Les biens. Paris. 1992. С. 148, Латинские юридические изречения // составитель и автор предисловия проф. Е.И. Темнов. – М.: Изд. “Экзамен”. Право и Закон, 2003. С. 155.

¹² Տե՛ս Якушев А.В. Конституционное право зарубежных стран. Общая часть. Особенная часть. Конспект лекций. – М.: Приор-издат, 2005. С. 107.

¹³ Տե՛ս հոդ. XII (Owning property carries a social responsibility), Հունարիայի Սահմանադրություն, 25.04.2011 // http://www.euractiv.com/sites/all/euroactiv/files/CONSTITUTION_in_English_DRAFT.pdf

¹⁴ Տե՛ս հոդ. 17, Հունաստանի Սահմանադրություն, 11.06.1975 թ. // <http://www.hri.org/docs/syntagma/article125.html#A17>

¹⁵ Տե՛ս հոդ. XII, Թուրքիայի Սահմանադրություն, 7.11.1982 թ. // <http://right777.ru/konst.html?id38>

¹⁶ Տե՛ս Carbonnier J. Droit civil. Tome 3, Les biens. Paris. 1992, p. 149.

¹⁷ Տե՛ս Սեծ փիլիսոփայություններ / Քրանս. քարգմ.՝ Ս. Խաչատրյան. - Եր.: Սարգիս Խաչենց, 2002, էջ 71:

¹⁸ Տե՛ս Անդրեասյան Գր. Մ. Գերմաներեն-հայերեն բառարան / Խմբագիր Ե.Գ. Տեր-Սլեմասյան, Եր.: ԵՊՀ հրատ., 1976, էջ 51:

¹⁹ Տե՛ս 48 հոդ., Խորվաթիայի Սահմանադրություն, 22.12.1990 թ. // <http://right777.ru/konst.html?id38>

²⁰ Տե՛ս Aubry Jean-Bernard, La globalisation, le droit et l'Etat, 2e nd., Paris, 2010, p.175-182.

²¹ Տե՛ս «Հասարակության և պետության կարիքների սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 27.11.2006թ.:

²² Տե՛ս Կոնֆուցիոս գրույցներ, Եր. 1991, էջ 88; Աստվածաշունչ, Մատրէս 7:12, Էջմիածին, 2001; Спиноза Б.

Բոգոլովско-политический трактат, 1670, Г. XVI; Антология мировой философии, Т. 1, Ч. 1, М. 1969. С. 519.

²³ Տե՛ս Штобер Р. Хозяйственно-административное право. Основы и проблемы. Мировая экономика и внутренний

рынок; пер. с нем. – М.: Волтерс Клювер, 2008. С. 199-200.

²⁴ Տե՛ս Ռուֆի Շտոբեր – իրավ. գիտ. դ., պրոֆեսոր, Համբուրգի համալսարանի հանրային իրավունքի և պետության տեսության ամբիոնի պրոֆեսոր, Տնտեսական իրավունքի ինստիտուտի տնօրեն:

²⁵ Տե՛ս Ռուֆի Շտոբեր P. նույն տեղում:

²⁶ Տե՛ս Խաչագրյան Մ.Ա. Проблема соотношения прав распоряжения и завещания в Конституции РА // Դատական իշխանություն, 2007, N 11-12 (նոյեմբեր-դեկտեմբեր), էջ 42; տե՛ս նաև Բազմաբնակարան շենքը՝ որպես գույք // Դատական իշխանություն, 2009, N 7/120 (հուլիս), էջ 48, Բազմաբնակարան շենքը՝ որպես սեփականության իրավունքի օրինակ // Երրորդ տարեկան գիտաժողով (5-10 դեկտեմբերի 2008 թ.). Գիտական հոդվածների ժողովածու, Մաս 1, Եր., ՀՌՀ հրատարակչություն, 2009, էջ 611:

²⁷ Տե՛ս Վենедиктов Ա. Վ. Государственная социалистическая собственность // Избранные труды по гражданскому праву. В 2 т., Т. II., М.: «Статут», 2004. С. 274.

²⁸ Տե՛ս Այդ սկզբունքը ամրագրված է և ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածում, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետում:

РЕЗЮМЕ

Социальная функция права публичной собственности

Настоящая статья посвящается роли права собственности в современном обществе. В частности, автор представляет на уровне метафизики научную концепцию “обязующее право собственности”. В данной статье автор обратился к определению социальной функции права публичной собственности, содержания, которая относительна по национальным правовым системам, по национальным и международным измерениям, по объекту права собственности и т.п. Эти концепции права собственности рассматривают право собственности как социально обусловленное и обремененное социальными обязательствами. Однако, для того, чтобы это право через идею социальной функции не было злоупотреблено, как это имело место в фашистской Италии и националистической Германии, автор предлагает произвести новое законодательное урегулирование обремененного социальной функцией права собственности.

SUMMARY

Social function of public property law

The present article is dedicated to the role of property law in modern society. In particularly, the author tries to represent the scientific concept of “obligatory property law” on metaphysical level. The author touched upon the problem of definition of the social function of the public property law. The contents which are relative by national legal system, by national and international dimensions and the objects of property law, etc. Those concepts observe the rights of property law as overloaded by social functions. However, not to have the social function trespassed by authorities, as for example it took place in fascist Italy and nationalist Germany the author suggests that obligation issues derive from social function, to have it regulated and controlled by laws.